Զմիւռնայի բանուկ հրապարակին վրայ ալ այդ միջոցներուն կը փայլէին հինաւուրց Պալեօղեանք, Եսայեանք, Սպարթալեանք, Վարպետեանք, Էքիզլէր եղբարք, Պաքրճեանք և այլք ոմանք, որոց շատերն ե՛ւ հարստութեամբ ե՛ւ գործունէութեամբ հաւասարեցան Կ. Պոլիսի մեծ հայ վաճառականներուն։

Պրուսայի մէջ՝ հանդարտ ու տեղական զուարթ գործունէութեամբ բարգաւաճեցան Պոտուրեանք, Պալապան եղբարք, Թէոսեանք, Արապեանք, Ֆնտրքեանք և այլք, որոց գործունէութեանց մեծ մղում կուտար Պրուսայի և շրջակայից խոզակի գործը։

Իսկ Ադրիանուպոլիսի մէջ՝ Անանիա Պօղոսիկ, Աստարճեան, Յարութիւն Յովհաննէսեան, որ բռնած էին մասամբ Ռումելիայի ադրիանական մասին վաճառականութիւնը։

Տրապիզոնի մէջ նշանաւոր էր՝ քանի մը յոյն եւ թուրք վաճառականներու հետ՝ Արապեան տունը, Եիւնեայի մէջ՝ Մութաֆեան, Վառնայի և Ռուսճուքի մէջ՝ Յովասափեան և Նաշիտ Աստուածատուրեան, որ կտակեց 1000 օսմ. ոսկի բարեգործական հաստատութեանց։

Իսկ Սոֆիայի, Ֆիլիպէյի, Սելանիկի, Պապա տաղի, Մանաստիրի և Ռումելիայի միւս գլխաւոր շահաստաններուն մէջ՝ մեծ վաճառականութիւնը գրեթէ միշտ գտնուած է մեծ մասով թուրքաց, յունաց, պուլղարաց և հրէից ձեռքը, երկրորդական փոքր վաճառողութենէն մանրիկ մը միայն ըլլալով դաղթեալ հայերուն ձեռք։

Ռումանիայի՝ մանաւանդ Բէօսթէնճէյի՝ մէջ վերջերն յաջողապէս փայլած են քանի մը Հայեր, Ֆրէնկեանք ու Մանիսալեանք՝ մանաւանդ ցորենի մեծկակ գործերով։

Գլխաւոր այս շահաստաններէն զատ՝ թուրքահայ վաճառականք գործած են երկրորդապէս դարձեալ Նի-